

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄՍՑԻՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ ՈՐՊԵՍ  
ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ «ԳՈՐԾԻՔ»

ԱՆԱՀԻՏ ԱԴԻԼԽԱՆՑԱՆ

Հոդվածը նվիրված է աշխարհին աննախադեպ պատուհասած «Քովիդ 19»-ի ազդեցությանը հայոց լեզվի բառապաշարի վրա: Ստեղծված նոր իրավիճակով պայմանավորված «կորոնա» օտար բառայթով կազմվեցին նոր բառեր ու բառակապակցություններ, կատարվեցին փոխառություններ անգլերենից, տեղի ունեցավ բառապաշարում առկա բառերի իմաստների ընդլայնում: Կորոնավիրուսային այս բառապաշարը դասակարգել ենք ըստ գործածության և գործառույթի՝ բժշկական տերմիններ, հանրային ճանաչում ստացած բառեր ու բառակապակցություններ, ոճաարտահայտչական երանգավորում արտահայտող բառեր, իմաստային նորաբանություններ, նաև՝ ըստ թեմատիկ խմբերի՝ վիրուս կրող մարդկանց խմբեր, համաճարակի հետ կապված մարդկանց զբաղմունքի և վարքականոնի անվանումներ, առարկաների անվանումներ, համավարակի հետ կապված հիվանդությունների անվանումներ: Այս քննությունը (շուրջ 122 բառ և բառակապակցություն) վկայում է այն մասին, որ համաշխարհային իրադարձությունները լեզվի վրա ևս մեծ ազդեցություն են գործում, և լեզուն յուրովի է արձագանքում դրանց: Համավարակի ընթացքում ստեղծված բառերը, բառակապակցությունները, ինչպես նաև ոչ խոսքային միջոցները տեղեկություն են հաղորդում հասարակական նշանակություն ունեցող երևույթի մասին, որն անհրաժեշտ է մարդկանց կողմնորոշելու, իրենց գործելակերպը կարգավորելու համար: Իսկ բառերը ժամանակի ընթացքում գործածությունից դուրս կգան՝ դառնալով 21-րդ դարի կորոնավիրուսային ժամանակահատվածը բնութագրող պատմաբառեր, և կարձանագրվեն բառարաններում՝ համալրելով հայոց լեզվի բառակազմը:

**Բանալի բառեր** – կորոնավիրուսային բառապաշար, հաղորդակցական գործիք, նոր իրավիճակ, բժշկական տերմիններ, հանրաճանաչություն ստացած բառեր, ոճաարտահայտչական երանգավորում արտահայտող բառեր, ինքնամեկուսանալ, բառակապակցություն տերմիններ, դիպվածային նորակազմ բառեր, ոչ խոսքային միջոցներ

Յուրաքանչյուր լեզվի բառապաշար հարափոփոխ է, շարժուն՝ պայմանավորված հասարակական կյանքում տեղի ունեցող քաղաքական, գիտատեխնիկական, սոցիալական գործընթացներով, ինչպես նաև համաշխարհային իրադարձություններով, և լեզուն ընտրում է այդ ամենին արձագանքող բառապաշար:

Աշխարհին պատուհասած կորոնավիրուսային աղետին վերաբերող բառերը չէին կարող մուտք չգործել նաև մեր լեզու: «Քովիդ-19» հա-

մավարակով պայմանավորված՝ հասարակական կյանքում ստեղծվեց նոր իրավիճակ. մարդիկ ստիպված էին մեկուսանալ տանը, աշխատել և սովորել հեռավար, դադարեցնել միջանձնային և խմբային շփումները: Անհրաժեշտաբար լեզու թափանցած նոր բառերի իմաստները համապատասխանում են ստեղծված իրողություններին, հասարակության նոր պահանջմունքներին: Կորոնավիրուսի բռնկման ժամանակաշրջանում առաջացած նոր բառերն ու բառակապակցություններն էլ սույն հոդվածի ուսումնասիրության նյութն են:

Այս դեպքում «կորոնա» օտար բառույթի շուրջ համախմբված են այն լեզվատարբերը, որոնք կա՛մ նոր բառեր ու արտահայտություններ են, կա՛մ նոր փոխառություններ են, կա՛մ իմաստային նորաբանություններ են, որոնք լեզվակիրներին համար կամա թե ակամա դարձան հաղորդակցման միջոցներ: Քանի որ ասպարեզում հանգամանակից ուսումնասիրություն չկա, միայն թռուցիկ անդրադարձ է կատարվել այս ժամանակաշրջանի բառապաշարին<sup>1</sup>, ուստի մեր նպատակն է ուսումնասիրել պանդեմիա-համավարակի ազդեցությունը մեր լեզվի վրա. ինչպես է մեր լեզուն արձագանքել նոր բառերի առաջացմանը, պարզաբանել այդ բառերի և արտահայտությունների կազմավորման առանձնահատկությունները, ինչպես են դրսևորվել դրանց ոճաարտահայտչական դերն ու նշանակությունը հայերենի լեզվական համակարգում, լեզվական միջոցներից բացի՝ վիրուսին առնչվող ոչ խոսքային ինչ միջոցներից են մարդիկ օգտվել համաճարակի ժամանակ:

Ուսումնասիրության համար նյութեր վերցրել ենք համացանցից, թերթերից, առողջապահության նախարարության պաշտոնական կայքէջից, ինչպես նաև Առողջապահության համաշխարհային կազմակերպության կայքէջից (ԱՀԿ)<sup>2</sup>: Բառերի մի մասը փոխառյալ տերմիններ են, մյուս մասը նորակազմ բառեր են, բառերի մեկ այլ խումբ լեզվում գոյություն ունեն, բայց ձեռք բերեց նոր՝ լրացուցիչ իմաստներ: Քանի որ այդ բառերը արտահայտում էին կորոնավիրուսային ժամանակաշրջանի իրողություններն ու երևույթները, բառերի այդ խումբը կոչվեց կորոնավիրուսային բառապաշար: Իսկ ինչո՞ւ կորոնավիրուս: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2020 թ. փետրվարին հայտարարեց, որ նոր վիրուսը պետք է կոչվի կորոնավիրուս, քանի որ 1968 թ. գիտնականները մանրադիտակով զննելիս վիրուսը տեսել էին արևային թագի տեսքով<sup>3</sup>, այնուհետև կորոնան թարգմանվեց թագ թագավարակ, թագավարակիչ, թագավիրուսակիր, թագաժահր: Ի դեպ, «կորոնա» բառը փոխառված է ռուսերենից, իսկ անգլերեն բառարաններ-

<sup>1</sup> Տե՛ս Մ. Սարգսյան, Ն. Խաչիբաջյան, «Կորոնա» բաղադրիչով նորակազմ բառերի քննություն, «Լեզու և լեզվաբանություն հանդես», № 1, 2021, էջ 69, Ա. Ղարսյան, Նոր բառեր և բառակապակցություններ արդի հայերենում՝ պայմանավորված ՔՈՎԻԴ-19-ով, «Լեզու և խոսք», № 1(1), 2021, էջ 76, «Նոր բառեր», Ձ պրակ, Եր., 2021, էջ 91:

<sup>2</sup> Տե՛ս <https://hy.wikipedia.org/wiki/COVID-19>:


<sup>3</sup> Տե՛ս [monitoring -group-report.pdf](https://www.monitoring-group-report.pdf) :

րում թագ-crown-ն է: «Ռուս-հայերեն բառարանում» այսպես է բացատրված՝ «КОРОН/А ի. 1. թագ, պսակ... 3. աստղգ. լուսապսակ, պսակ. солнечная - արևապսակ, արևի լուսապսակ»<sup>4</sup>:

Մեր նպատակն է բացահայտել նոր բառերը, քննել դրանց նոր իմաստները, վերլուծել և կատարել համեմատություն բժշկական այն տերմինների հետ, որոնք արձանագրված են եղել նախկինում:

Բառապաշարը հարստանում է, համարվում է նոր բառերով, իսկ ինչպես հայտնի է, բառապաշարի հարստացումը կատարվում է երկու ճանապարհով՝ ներքին և արտաքին: Արտաքին ճանապարհը տարբեր լեզուներից կատարված փոխառություններն են, ինչպես՝ քովիդ (COVID), QR կոդ, լոքդաուն (lockdown), դելտա շտամ (delta shtam), ալկոգել (alkogel) ևն, իսկ ներքին ճանապարհը լեզվի հնարավորություններով բառակազմության եղանակով, նոր բառեր կազմելն է, նաև լեզվի տարբեր փուլերից կատարված փոխառությունները (օրինակ՝ ժահր բառը, որը պարսկական ծագում ունի՝ zabar-թոյն<sup>5</sup>, գործածական է բարբառներում, նշանակում է թոյն, մահադեղ<sup>6</sup>): Այս արմատով են կազմվել մի շարք բառեր՝ թագածահր, թագածահրակիր, պսակածահր, թագածահրախտ, ժահրախտ: «Գորոնա ժահրախտը ժահրային հիւանդութիւն մըն է» (horizonweekly. ca. 27. 01. 2020):

«Գորոնա» բառույթի շուրջը միավորված են լեզվական այն միջոցները, որոնք «կորոնա»-ի հետ ոչ միայն իմաստային զանազան հարաբերություններ են արտահայտում, այլև ոճաարտահայտչական հնարավորություններ են դրսևորում: Բացի այս, նշյալ իմաստային դաշտը լրացնում են ոչ խոսքային միջոցները. դրանք միավորված են նաև ըստ իրենց տարբեր գործառույթների:



<sup>4</sup> Ա. Ս. Ղարիբջան, Ռուս-հայերեն բառարան, Եր., 1977, էջ 401:

<sup>5</sup> Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Եր., 2010, էջ 135:

<sup>6</sup> Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1, Եր., 1979, էջ 825:

Երբ կորոնավիրուսը նոր էր թափանցել մեր հասարակական կյանք, այդ երևույթին արագորեն արձագանքելու նպատակով կա՛մ փոխառության ճանապարհով, կա՛մ բառակազմության եղանակներով ստեղծվեցին նոր բառեր ու բառակապակցություններ, որոնք լրացրին բժշկական տերմինահամակարգը: Վիրուսի տարածմանը զուգընթաց՝ ստեղծվեցին նաև այնպիսի բառեր, որոնց միջոցով ընդգծվում էր հասարակական տարբեր խավերի վերաբերմունքը: Դրանք դիպվածային նորաբանություններ էին, որոնք վկայում էին մեր լեզվի բառակազմական մեծ հնարավորությունների մասին: COVID-19-ը թափանցեց հասարակական կյանքի տարբեր ոլորտներ՝ աշխատանքային, կրթական, անձնական, կենցաղային: Լեզուն բախվեց նոր իրողությունների, որոնք տեղի էին ունենում աշխարհում: Հաղորդակցական միջոցները ազդում են բառապաշարի վրա՝ on line, Zoom: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման շրջանում շատ բառեր են գրանցվել էլեկտրոնային բառարաններում, և ամեն տարի նոր բառեր են ստեղծվում՝ տվյալ տարին բնութագրող (2020-2021 թթ): Ըստ հասարակական կյանքի տարբեր ոլորտների՝ կորոնավիրուսային բառապաշարը դասակարգվում է.

1. **Բժշկական նոր տերմիններ,**
2. **Հանրային կյանքին վերաբերող բառեր,**
3. **Ոճաարտահայտչական երանգավորում արտահայտող բառեր,**
4. **Իմաստային նորաբանություններ,**
5. **Կարևորվում է նաև ոչ խոսքային միջոցների դերը. միջոցներ, որոնք կանխարգելում էին վարակի տարածումը:**

1. **Բժշկական նոր տերմիններ:** Քովիդիով պայմանավորված՝ շատ տերմիններ ստեղծվեցին. բառերի տերմինային իմաստի հիմնական բնութագրիչը դարձավ հասկացության ճշգրիտ վերարտադրումը, քանի որ «ճշգրտությունը տերմինային իմաստի անհրաժեշտ պահանջն է. ոչ ճշգրիտ հասկացությունը, և հետևաբար դրա ոչ ճշգրիտ սահմանումը գիտական արժեքից կզրկեր տերմինը և տերմինային իմաստը»<sup>7</sup>: Մակայն այն փաստը, որ որոշ տերմիններ, ինչպես «կորոնա»-ն, գիտության այս ոլորտի համար արդեն ընդունելի հասկացություններից են, ուստի դրանով ստեղծված շատ բառեր վկայում են այն մասին, որ դրանք կազմվել են՝ արտահայտելով բառիմաստի և հասկացության անմիջական կապը: Բառի տերմինային իմաստը ոչ միայն կապված է գիտատեխնիկական առաջընթացի, այլև մարդու կողմից երևույթը ընկալելու ճանաչողական մակարդակի հետ: Ուստի բառերը, որոնք գործածվում են հասարակական կյանքի տարբեր ոլորտներում և արտահայտում են այդ բնագավառին բնորոշ որոշ հասկացություններ, արդեն տերմիններ են: Հենց COVID բառը, որը համաշխարհային ճանաչում գտավ որպես նոր վիրուսի անուն, բժշկական ոլորտում փոխառյալ

<sup>7</sup> Էդ. Աղայան, Տերմինագիտություն, Եր., 1978, էջ 15:

տերմին է: COVID-19 -ը հապավում է: CO – նշանակում է թագ (corona) VI – նշանակում է վիրուս (virus), որը ծագել է լատիներենից, D – նշանակում է հիվանդություն (disease), 19-ը այն տարեթիվն է (2019), երբ հայտնաբերվեց հիվանդությունը<sup>8</sup>:

Այս տերմինը շատ արագ հանրայնացվեց, ինչպես նաև դրանով կազմված շատ այլ բառեր՝ կորոնակենտրոն, կորոնավիրուսակիր, կորոնաճգնաժամ, կորոնավիրուսային, կորոնավարակ, կորոնաթվեր, կորոնապատկեր, կորոնացուցակ են: Այլ հարց է, որ այս բառերը նեղ մասնագիտական ոլորտից դուրս եկան և ձեռք բերեցին հասարակական գործածություն. տեղի ունեցավ բժշկական տերմինի նեղ մասնագիտական իմաստի ընդլայնում՝ պանդեմիա, կոնտակտավոր, վիրուսակիր, կորոնա, քովիդ, կորոնավիրուս, կորոնամեկուսացում են: Բայց կան նորաբանություն տերմիններ, ինչպես նաև հապավումներ, որոնք գործածվում են միայն բժշկական ոլորտում<sup>9</sup>: Դրանք են՝

**QR կոդ** - Արագ արձագանք (Quick Response)

**Դեյտա շտամ**- Կորոնայի տեսակներից: *«Դեյտա շտամի արագ տարածման վտանգավորության մասին իրազեկվածությունը թույլ կտա միջոցներ ձեռնարկել ռիսկերը նվազեցնելու համար»:*

**ՊՇՌ** թեստ- Պոլիմերային շղթայական ռեակցիայի հետազոտություն: *«Գործից դուրս գալու այլընտրանքը ՊՇՌ թեստի բացասական արդյունքը ներկայացնելն է»:*

**Պանդեմիա** - Համաճարակ: *«Պանդեմիան չպետք է շփոթել էպիդեմիա բառի հետ, որովհետև պանդեմիան վերաբերում է միայն մարդկանց, իսկ էպիդեմիան՝ նաև թռչուններին ու կենդանիներին: Էպիդեմիան ունի տեղային (լոկալ) նշանակություն. համաճարակը տվյալ տարածքով է սահմանափակվում, իսկ պանդեմիան ընդգրկում է ամբողջ աշխարհը»:* *«Պարետատունն ասում է՝ ձեռնոց դրեք... Ինչ «կորոնավիրուսային պանդեմիա» բառակապակցությունը դարձել է սովորական, և մեր սովորական կյանքը հաշված օրերի ընթացքում 180 աստիճան վերածվել է անսովորի...»* (Գրական թերթ, 01.05.2020):

**Թթվածնաքաղց** - Ծանր սուր շնչառական համախտանիշ:

**Նմուշառում** - Նմուշառումը կատարվում է քթից, բերանից, թքից՝ հիվանդության ախտորոշման նպատակով: *«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի Շիրակի մասնաճյուղում որոշում է կայացվել նմուշառում կատարել Մարալիկի հիվանդանոցի 70 աշխատակիցների շրջանում»* (Հետք, 2020, 17 ապրիլի):

**Բուժառու** - Պացիենտ բառի հայերեն համարժեքն է՝ (պացիենտ-լատիներեն *patients*՝ տառապող բառից), այսօր նշանակում է բուժվող հիվանդ: Հայերեն բուժառու բառը ամբողջությամբ չի արտահայտում երևույթի խորությունը, որովհետև բուժառուն հիվանդանոցում պառ-

<sup>8</sup> Տե՛ս <https://hy.wikipedia.org/wiki/COVID-19>

<sup>9</sup> Տե՛ս ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական կայքը ([www.moh.am](http://www.moh.am)):

կած և բուժվող հիվանդն է, իսկ պացիենտը բուժման կարիք ունեցող հիվանդն է: «Այսօր Նորքի ինֆեկցիոն հիվանդանոցում ունենք 400 բուժառու, մահճակալային ֆոնդը չի բավականացնում» ( moh.am):

**Կրկնաթեստ** - Կրկնակի նմուշառումն է՝ ստուգելու՝ արդյոք ճիշտ է թեստի պատասխանը:

**Համախտանիշ** - Ախտանիշ (синдром): «COVID -19 կորոնավիրուսի հետևանքով առաջացած հիվանդության համավարակը սկսվել է 2019 թ. նոյեմբերին կամ դեկտեմբերին Չինաստանի Հուբեյ նահանգի Ուհան քաղաքում: Այն 70% -ով նման է ծանր սուր շնչառական համախտանիշի»:

**Համավարակ – Համաճարակ:** «Պետք է պատրաստվեին վավերագրական ազդեցիկ տեսաֆիլմեր մարդու առողջության ու ճակատագրի վրա համավարակի ունեցած ազդեցության մասին, ինչպես նաև փաստահեն նյութեր» (Research-Covid-19):

Կային տերմիններ, որոնք միայն բժիշկներին էին հայտնի (մասնագիտական բառեր էին), բայց կորոնան ստիպեց, որ դրանք հանրայնացվեն:

**ԿՏ (ԿՏ) -** Թոքերի համակարգային (տոմագրաֆիկ) ախտորոշում: Վիրուսով վարակված հիվանդները պարտադիր թոքերի ստուգում էին անցնում՝ թոքերի ախտահարման տոկոսը որոշելու նպատակով:

**Կորոնավիրուս** - Հիվանդության անվանումն է. սուր շնչառական համախտանիշ (SARS) վիրուսային բնույթով հիվանդություն: «Հիվանդությունը կարող է խորանալ՝ հանգեցնելով թոքաբորոքի բազմաօրգանային անբավարարության և մահվան»:

**Սատուրացիա** - Արյան թթվածնով հագեցվածությունն է: «Այն նորմալում պետք է լինի 95% -ից բարձր(armtims.com)»:

**Կորոնավիրուսակիր - Կորոնավարակակիր**

**Կորոնապատկեր** -Կորոնայով հիվանդացածների և առողջացածների ընդհանուր պատկերը:

**Կրիչ** - Սարք, որով տեղեկատվությունը փոխանցվում է շատ արագ: Այս «կրիչը չի փոխարինում flash տարբերակին: Այսօր Կրիչը ավելի շատ նշանակում է մագնիսային ժապավեն, որի վրա գրվում են արդյունքներ և կարդում դրանք: Նման Կրիչը պահպանում է տեղեկությունը: Թվային դարում Կրիչը բովանդակություն է կրում-պահպանում և փոխանցում»<sup>10</sup>: «Փենսիլվանայի նահանգի համալսարանից Մարչել Բոնին հայտարարել է, որ առանց հսկողության թողնված վարակիչ բռնկումները հասնում են «սարահարթի», իսկ հետո սկսում են նվազել, երբ հիվանդությունն ավարտվում է մատչելի կրիչներով» (Wikipedia Covid-19):

**Շնչադիմակ - Ռեսպիրատոր:** Դիմակ, որը նախատեսված է օդում եղած թունավոր գազերից, գոլորշիներից, փոշուց պաշտպանելու համար:

**Քովիդ** - Հիվանդության անվանումը:

<sup>10</sup> Դ. Գյուրջինյան, Զարմանալի հայերեն, 2020, Եր., էջ 115:

**Վարակակիր- Վիրուսակիր:** «...65 հոգու թեստավորելիս հայտնաբերել են 8 վարակակրի, սակայն նրանցից ոմանք անմիջապես որոշել են կրկնակի թեստ հանձնել ...ու մեկ օրվա տարբերությամբ կրկնաթեստի պատասխանը եղել է բացասական» (aravot.am) 2020/09/09/: Բժշկական տերմինների մեջ են մտնում պատվաստանյութերի անվանումները՝ Astrazeneka, Fayzer, Sputnik, Moderna, Sinovak:

**Ալկոգել** (alkogel) - Հակամանրէային ախտահանիչ միջոց (ալկոհոլային հիմքով). «Ալկոգելի հասանելիությունը բաժանմունքներում խնդրահարույց է» (aravot.am, 02/23):

**Բառակապակցություն-տերմիններ:** Բառակապակցություն-տերմինների մեջ կան այնպիսիք, որոնք նորաբանություններ են (գրոյական հիվանդ), կան հասարակությանը հայտնի բառակապակցություններ՝ այլ ոլորտներում գործածվող՝ կարմիր գոտի (դիվ.), կանաչ գոտի (Էկոլոգ.) ևն, որոնք համավարակի ժամանակ ձեռք բերեցին լրացուցիչ իմաստներ:

**Առաջին գծի թեստ:** «2020 թ. մարտից ռադիոլոգիայի ամերիկյան քոլեջը խորհուրդ է տալիս, որ CT-ն չօգտագործել սկրինինգի համար որպես COVID-19 ախտորոշման առաջին գծի թեստ» (Wikipedia.org/wiki/covid-19):

**Բացասական թեստ, դրական թեստ** (live news.am): Զրոյական հիվանդ: «Կան տարբեր տեսություններ, թե որտեղից կարող էր առաջանալ առաջին դեպքը, այսպես կոչված գրոյական հիվանդը (Wikipedia.org/wiki/covid-19)», **գրոյական պացիենտ:** «Չինաստանում հայտնաբերվել է Covid-19-ի գրոյական պացիենտը» (jam-news.net/am):

**Կարմիր գոտի:** 1. Մեկուսացված բուժհիմնարկներ հիվանդների համար նախատեսված, որտեղ միայն բժիշկները կարող էին մտնել: 2. Նշանակում է՝ այն տարածքները, երկրները, որոնք ունեն վարակի տարածման բարձր ցուցանիշ: «Մա խիստ մտահոգիչ է, և սրա հետևանքով մենք հայտնվում ենք տարբեր կարմիր գոտիներում, որի արդյունքում ավելի քիչ թվով զբոսաշրջիկներ են գալու Հայաստան» (moh.am, 04.08, 2-20, 17-ն- Aris):

**Նարնջագույն գոտի:** Հիվանդության տարածման միջին մակարդակ: «Եվրամիության չափորոշիչների համաձայն՝ այժմ Հայաստանը նարնջագույն գոտում է, ռիսկային կարմիրից ընդամենը մեկ քայլ հեռու» (azatutyun.am/a/31952161.html):

**Կանաչ գոտի:** Այն տարածաշրջանը կամ երկիրը, որտեղ հիվանդության ցածր մակարդակ է:

**Կորոնավիրուսային ալիք:** «Վերջին ամսվա ընթացքում նկատվում է կորոնավիրուսային ալիքի անկում» (moh.am):

**Ցածր սաստուրացիա:** «Ցածր սաստուրացիա ունեցող հիվանդները հոսպիտալացվել են» (moh.am):

**Հետքովիդյան համախտանիշ:** «Մարդկանց 10-20%-ի մոտ հիվան-

դուրսնից ապաքինվելուց հետո նկատվում են միջնաժամկետ և երկարաժամկետ հետևանքներ, որոնք հայտնի են որպես հետքովիդյան համախտանիշ» (*unicef.org/Armenia*):

**Կորոնավիրուսային թոքաբորբ:** «Կորոնավիրուսային թոքաբորբը իր բնույթով վիրուսային է, ի տարբերություն այլ թոքաբորբերի» (*unicef.org/Armenia*):

**Թոքաբորբային ալիք:** Սա քովիդի հետևանք է, երբ ամբողջովին ախտահարվում էին թոքերը: Թոքերի դիսթրես համախտանիշ: Թոքերի անբավարարություն, որը հանգեցնում է մահվան:

**Բազմաօրգանային անբավարարություն:** Բոլոր օրգանների ախտահարություն:

**Կորոնավիրուսային համաճարակ** նն:

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, բժշկական նոր տերմինների մի մասը փոխառվել է անգլերենից, մյուս մասը նորակազմ բառեր են, ընդ որում՝ բարդ բառերը կա՛մ կազմված են հայերեն արմատներով, կա՛մ կորոնա + հայերեն արմատ կաղապարով: Բառակապակցություն-տերմինների համար հիմնական կաղապարը ածական+գոյական կառույցն է:

**2. Հանրային կյանքին վերաբերող բառեր:** Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման շրջանում շատ բառեր արձանագրվեցին էլեկտրոնային բառարաններում, և տվյալ տարին բնութագրող նոր բառեր ստեղծվեցին: Քանի որ հայերենը բառակազմական մեծ հնարավորություններ ունի, ուստի այդ ճանապարհով տեղի է ունեցել բառապաշարի արդիականացում: Վերջին երկու տարիներում բավական շատ նոր բառեր են ստեղծվել, որոնք արագ հանրային ճանաչում ստացան: Դրանք բարդ բառեր են, որոնցում առաջին բաղադրիչը հիմնականում «կորոնա» բառն է, որը միայն լրացման դեր է կատարում: Ինչպես նշում է Մ. Աբեղյանը. «...մասերից առաջինն ըստ իմաստի լինում է լրացում երկրորդի, այսինքն՝ բարդ բառի գլխավոր նշանակությունը երկրորդ մասի մեջ է, առաջինը միայն որևէ կողմից որոշում, լրացնում է երկրորդի իմաստը»<sup>11</sup>: Բարդ բառերը գերակշռում են, որովհետև մի քանի արմատների միաձուլումից առաջացած նոր բառը ավելի հասկանալի է դառնում հասարակությանը: Բառի ձևը և նրա իմաստը ամբողջական պատկերացում են տալիս նոր իրողության մասին:

Բառերը վերաբերում են առողջապահական, տնտեսական, քաղաքական, կրթական բնագավառներին:

«Եթե դպրոցները 10 օր էլ փակ մնան, ծնողները կորոնավիրուսի պատվաստանյութը կգտնեն ավելի շուտ, քան գիտնականները» (*հմգ.*):

**Առաջնավարակակիր-** Կորոնայով վարակված առաջին հիվանդը: «Կորոնավիրուսով վարակված առաջնավարակակիրը ՀՀ-ում գրանցվեց մարտի 1-ին» (*jam-news.net/am*):

**Կորոնակենտրոն** - «Հիվանդանոցի վերածումը կորոնակենտրոնի

<sup>11</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 201:



պարալիզացրել է հանրապետությունում ինֆեկցիոն հիվանդությունների արդյունավետ կառավարումը» (aravot.am):

**Կորոնաճգնաժամ** - «Հայտնի են այն քաղաքները, որոնք արդյունավետ պայքարել են կորոնաճգնաժամի դեմ» (aravot.am):

**Կորոնաշարք, կորոնացուցակ** - «Կորոնացուցակի առաջատարները ԱՄՆ-ն, Բրազիլիան են» (5-րդ ալիք, 22.07.2020):

**Կորոնացուցանիշ** - «Մտահոգիչ են կորոնացուցանիշները և զանգվածային հիվանդացումը» (Արմնյուզ, 10.07.2020):

**Կորոնայրահոս**- «Օրվա կորոնայրահոսը համառոտ» (TV Արմենիա, 22.07.2020):

**Թագաժահր-թագավարակ** - «Անձ մը, որ որևէ ախտանշան չունի, կարող է իր վրա կրել թագաժահրը» (Ժամանակ օրաթերթ, 2020, հուլիսի 22):

**Թագավարակիչ** - տե՛ս կորոնավարակակիր:

**Պարետատուն** - Այն վայրը, որտեղ զբաղվում են կորոնավիրուսային ճգնաժամի հետ կապված հարցերով: «ՀՀ պարետատունն անորոշ ժամկետով արգելել է հուլիսի 25-ից դեպի Եգիպտոս չվերթը» (Ժամանակ օրաթերթ, 2020, հուլիսի 22):

Գործածություն ստացան հետևյալ **բառակապակցությունները**.

**Ճգնաժամային հաղորդակցություն**: Ճգնաժամային հոդորդակցումը իրականացվում էր առցանց տարբերակով: «Ճգնաժամային հաղորդակցություն իրականացնող ինստիտուտները պետք է ունենան տեղեկատվական հոսքի մատուցման հստակ սխեմա» (bjc.am/wp-content/uploads/2021/10):

**Սոցիալական (ֆիզիկական) տարածք (անգլ.՝ social distancing)**: Դա առնվազն վեց ոսոնաչափ հեռավորությունն է՝ COVID 19-ի տարածումը կանխելու համար: Այս բառակապակցությունը գործածվել է փիլիսոփայության և հատկապես հոգեբանության ոլորտում (հմց.): Նշանակել է տարածություն, որը հաստատվում է անհատների կողմից խմբերի կամ մարդկանց շփման ժամանակ: Առանձնապես խոսքային և հաղորդակցական էթիկետում է գործածվում: Նաև՝ **ճգնաժամային հեռահաղորդակցություն, կորոնավիրուսային թոքաբորբ, կորոնավիրուսային ալիք, կորոնավիրուսային համավարակ, հակապատվաստումային արշավ, հակապատվաստումային խմբեր, պատվաստումային քաղաք** ևն:

**Անհայումային առաքում, առցանց առաքում**: Նպատակն այն է, որ մարդիկ շփում չունենային՝ վարակից խուսափելու համար: Բանկային ոլորտում գործածության մեջ մտան հետևյալ բառակապակցությունները՝ **առցանց վարկ, առցանց բանկ, առցանց վաճառք, առցանց գործարք** ևն: Թեպետ այս բառակապակցությունները կային, բայց հասարակության շրջանում նոր բովանդակություն ստացան: «Իրականացնում են առցանց շփման առաքում, որպեսզի նվազագույնի հասցվի շփումը մարդկանց միջև» (moh.am):

Կրթական և աշխատանքային ոլորտին վերագրվող բառեր՝ **հեռա-**

վար ուսուցում, կրթության հեռուսուցում, էլեկտրոնային մատյան, հեռավար դասեր, հիբրիդային ուսուցում, հեռավար կրթական հարթակ, առցանց կրթություն (տե՛ս ՀՀ ԿԳՄՄՆ պաշտոնական կայքէջը. «Տեղեկատվություն», [www.escs.am](http://www.escs.am)):

### 3. Ոճաարտահայտչական երանգավորում արտահայտող բառեր:

Կան հեղինակային-անհատական նորակազմություններ. դրանք դիպվածային նորակազմ բառեր են, որոնց իմաստը հասկանալի է միայն տեքստերում, և որոնք արտահայտում են հոդվածագրի վերաբերմունքը երևույթի հանդեպ: «Անհատական նորակազմությունների մի մասը ստեղծվում է նյութի անմիջական թելադրանքով, իրականացնում է հաղորդակցական կամ արտահայտչական գործառույթ և տեսականորեն նախադրյալ չունի դառնալու ընդհանուր գործածական»<sup>12</sup>:

Դիպվածային բառերը գնահատողական արժեք ունեն. արտահայտում են հոդվածագրի անհատական վերաբերմունքը կորոնավիրուսային իրողության նկատմամբ: Այդ բառերը ոճական զանազան երանգավորում են արտահայտում տեքստերում (առանձնապես առցանցներում են կիրառված)՝ խոսքին հաղորդելով երգիծական, հումորային բնույթ: Այս բառերով ընդգծվում են «կորոնա» երևույթին հասարակական տարբեր խավերի վերաբերմունքը, ինչպես՝ կորոնաֆորիա, կորոնամարզում, կորոնասամառ, կորոնագարուն, կորոնաֆուտբոլ, կորոնաֆաշիստ, կորոնապար, կորոնաթայմ, կորոնադիահերձարան, կորոնահումոր, կորոնաստորիզմ, կորոնավիճակ, կորոնագերություն, կորոնագում, կորոնադար, կորոնահասցե, կորոնամեկուսացում, կորոնամահձակալ, կորոնամոդա, կորոնազատիկ, կորոնակեղծիք, կորոնաժամանակներ, կորոնակալիպսիզ, կորոնաֆեյք, կորոնաթեյ ինֆողեմա (այս բառերի մի մասը արձանագրված են ներքոհիշյալ հոդվածում)<sup>13</sup>:

Հաղորդակցական միջոցները՝ Zoom, online, ևս ազդեցին բառապաշարի վրա՝ առցանց քննություն, առցանց հարցազրույց, առցանց դաս, հեռուստակոնֆերանս, գիտաժողով, դասախոսություն, օնլայնի փոխարեն, զում ծնունդ, զում հանդիպում, զում հարսանիք, զում ինջույք ևն: «Այս տարվա վերջին զանգին բոլորս միանում ենք զումզանգին (Zoom-ին) և սեղմում ենք տան զանգերը» (1 [lurer.am](http://lurer.am)): «Էջմիածնում նշանդրեքի ժամանակ կորոնատարոսիկներ էին բաժանում (հսց)»:

**Կորոնահերոս** - «Վրացահայ տիկնիկագործը, գյուղում մեկուսացած, կորոնահերոսներ ու կորոնատիկնիկներ է ստեղծում» ([aravot.am](http://aravot.am)):

**Քովիդացնել** - «Վերջում բոլորիս քովիդացնելու են ու նստեցնեն տանը (հսց.)»:

Ինչպես տեսնում ենք, դիպվածային այս բառերը կազմվել են բառակազմական տարբեր միջոցներով՝ ածանցում՝ համավարակ, վիրու-

<sup>12</sup> Յու. Ավետիսյան, Լ. Թեյան. Ա. Մարգարյան և ուրիշներ, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Եր., 2016, էջ 63:

<sup>13</sup> Տե՛ս Մ. Մարգարյան, Ն. Խաչիբաբյան, նշվ. աշխ., էջ 69:

սիկ, բառաբարդում՝ կորոնագատիկ, կորոնաամառ, բարդ ածանցավոր կորոնակեղծիք, կորոնագերություն ևն: Բոլոր բառերի համար հիմնական արմատը «կորոնան» է, մյուս արմատները բացահայտում են կորոնային վերագրվող երևույթներ:

**4. Իմաստային նորաբանություններ:** Նորաբանությունները միայն այն բառերը չեն, որոնք նոր են ստեղծվում թե՛ փոխառության, թե՛ լեզվի ներքին հնարավորությունների ճանապարհով, այլ նաև լեզվում առկա բառերի նախկին իմաստին նոր իմաստ հաղորդելն է: Կան բառեր, որոնք գործածվել են, սակայն քովիդով պայմանավորված՝ նոր ժամանակաշրջանին համապատասխան ձեռք են բերել այլ իմաստներ. տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում: «Անշուշտ, բառապաշարի իմաստաբանական զարգացումը ոչ միայն բառերի նորանոր իմաստ ստանալն է, այլև որոշ իմաստների հնացումը, սակայն իմաստաբանական զարգացման համար առավել էականը և գերակշռողը նոր իմաստների առաջացումն է, բառապաշարի զարգացման ուղիներից մեկն էլ սա է՝ իմաստաբանական նորաբանություններ ստանալը»<sup>14</sup>:

Իմաստային նորաբանություններ կարելի է համարել հետևյալները.

**Կարանտին** (բժշկ.): «1. Վարակիչ հիվանդությունների (համաճարակների) տարածումը կանխելու նպատակով հիվանդների և նրանց հետ շփում ունեցած անձանց ժամանակավոր մեկուսացումը: 2. Բուժական կետ՝ համաճարակ տարածված վայրից եկած մարդկանց, նավերը, ապրանքները ևն ստուգելու՝ զննելու համար, մեկուսարան»<sup>15</sup>:

Այս բառի իմաստը ընդլայնվել է. սկզբնապես նշանակել է ժամանակ, 40-օրյա վիճակ (իտալ. quarante giorni -40 օր): Բառը առաջին անգամ գործածվել է 14-րդ դարում Վենետիկում, երբ այլ երկրներից նավերը գալիս էին նավահանգիստ. 40 օր հետաձգվում էր դրանց մուտքը ծով (հմց.):

Կորոնայի ընթացքում այն ժամանակահատվածն է, երբ սահմանափակվում էր ոչ միայն տեղաշարժը, այլ երկրներից եկած մարդկանց շփումը, այլև առհասարակ շփումը՝ միջանձնային, խմբային:

**Համաճարակ** - Այս բառը լայն տարածում ստացավ: Էդ. Ադայանի բառարանում այսպես է բացատրված. «1. ամ, ամեն ինչ ճարակող լափող՝ ոչնչացնող... 4.գ. Որևէ վարակիչ հիվանդության լայն տարածումը: 5. Ընդարձակ տարածում գտած երևույթ»<sup>16</sup>:

Հայկազյան բառարանում գրված է. «Համայն ճարակեալ, ծախեալ, կերեալ 1.ամ, ամեն ինչ ճարակող լափող, ոչնչացնող»<sup>17</sup>: Մալխասյանի բառարանում նշված է. «Համաճարակ հիւանդութիւններ, որոնցով մի երկրում միաժամանակ շատերն են հիվանդանում՝ միմեանցից վարակ-

<sup>14</sup> Էդ. Ադայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 198:

<sup>15</sup> Էդ. Ադայան, Արդի հայերենի առձեռն բացատրական բառարան, Եր., 2014, էջ 627:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 696:

<sup>17</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Եր., 1981, էջ 17:

վելով»<sup>18</sup>: Թերևս այս բառը գործածվում էր միայն զանազան կարգի հիվանդությունների տարածման ժամանակ, օրինակ՝ խոզի գրիպ, թռչնագրիպ են, սակայն այսօր համաճարակը վերագրվում է հենց քովիդին, որը «սպառնում էր» մարդկային կյանքերին:

**COVID 19**-ը այսօր համաշխարհային երևույթ է, և հենց այդ բնույթով էր պայմանավորված ոչ միայն տարբեր երկրներից մարդկանց տեղաշարժը այլ երկրներ, այլև շփումը, մեկուսացումը, ինքնամեկուսացումը, համաճարակի ժամանակ խիստ սահմանափակումները երկրի բոլոր քաղաքացիների համար:

**Պարենտ** - «1. Կայացրային և պահակային ծառայության ճշգրիտ կատարման, հասարակական վայրերում զինծառայողների կարգապահության ևն հսկողության գործը վարող զինվորական պետ:

2. Ամրոցի կամ ամրությունների ամբողջ շրջանի բոլոր զորքերի պետ:

3. Զինծառայողների ու զինամթերքների փոխադրելուն և զորքերի շարժման ճշտությանը հետևող զինվորական:

4. Հասարակական շենք՝ հիմնարկ-ձեռնարկության՝ գործարանի ևն շենքերի հսկողությունն ու պահպանությունն իրականացնող պաշտոնյա»<sup>19</sup>:

Կորոնավիրուսային ժամանակահատվածում նշանակում է կառավարության կողմից հաստատված պաշտոնատար անձ, ով պատասխանատու էր քովիդի հետ կապված բոլոր միջոցառումների համար (իրադրային է):

**Դիմակ (mask)**- Էդ. Աղայանի բառարանում գրված է. «Սովորաթղթից կամ այլ նյութերից շինված մարդու կամ կենդանու դիմապատկեր, որ մարդիկ դնում են իրենց երեսին»<sup>20</sup> (ի դեպ, ոչ մի բառարանում արձանագրված չէր դիմակի բժշկական դերը):

**Դիմակը (face covering)** դեմքը փակելն է հիվանդությունից խուսափելու համար:

Դիմակը վիրուսից պաշտպանվելու լավագույն միջոցն էր և ամենապահանջված «ապրանքը»:

Բժիշկների անհրաժեշտ «գործիք»-ից այն ձեռք բերեց համաշխարհային (գլոբալ) նշանակություն շնչառական ապարատներով՝ ռեսպիրատորներով դիմակներ, դեմքի պաշտպանական վահաններ, միանգամյա գործածության դիմակներ, նորաձև դիմակներ՝ պատրաստված զանազան կտորներից, որոնք դարձան պերճանքի միջոցներ: Բայց ոչ միայն. համաճարակի տարածման ժամանակ, երբ մարդիկ դժվարությամբ էին ձեռք բերում դիմակներ (մասկաներ), այն վերածվեց բիզնեսի լավագույն միջոցի. մեծացավ նրա տնտեսական նշանակությունը: «Հաստատվեց դիմակա-ձեռնոցային ռեժիմ» (հսց):

<sup>18</sup> Ստ. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Եր., 2010, էջ 25:

<sup>19</sup> Էդ. Աղայան, Արդի հայերենի առձեռն բացատրական բառարան, էջ 985:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 275:

Կտրուկ ավելացավ ոչ միայն դիմակների ու ձեռնոցների, այլև հեռախոսների, գաջեթների, նոութբուքների, պլանշետների վաճառքը, քանի որ կրթությունը և աշխատանքը տեղափոխվեց Zoom հարթակ: Դա էական դեր խաղաց ՀՀ տնտեսության զարգացման վրա (փոքր ու միջին ձեռնարկատիրական գործունեություն ծավալող ընկերությունները սկսեցին արտադրել դիմակներ), մեծացավ այդ ապրանքների պահանջարկը:

**Ալիք** – «1. Ջրի մակերեսին բարձրացող շերտ, կոհակ:

2. Իր շարժումով կամ ձևով ջրի կոհակի նման զանգված:

3. Տատանողական շարժում ֆիզիկական միջավայրում:

4. Ալիքանման ծալք:

5. Իրար հաջորդող և իրար վրա բարձրացող շերտեր (հողի, ավազի ևն)»<sup>21</sup>:

**Ալիք** բառը նոր իրողության պայմաններում ձեռք է բերել կրկնավարակի իմաստ: «Կորոնավիրուսային ալիքը մեկ շաբաթվա ընթացքում էլի կաճի, աշխատում ենք դիմագրավել ալիքին» (moh.am):

**Ինքնամեկուսացում** - Երբ մարդը ինքնական մեկուսանում է շրջապատից<sup>22</sup>: Տերմինը հայտնի էր դեռևս 1940 թ., որը գործածվում էր հոգեբուժական պրակտիկայում և ուներ չեզոք բնույթ<sup>23</sup>: Համաճարակի ժամանակ պաշտոնապես ընդունվեց որպես տերմին. այն դարձավ վիրուսի դեմ պայքարի եղանակներից մեկը: Ինքնամեկուսացումը մարդուն զրկեց սովորական ազատությունից, հաճույքներից, հարազատների հետ շփվելու իրավունքից, ճանապարհորդելու հնարավորությունից:

Այսպիսով, «բառերն էլ, ինչպես մարդիկ, փոփոխություններ են կրում իրենց կյանքի ընթացքում՝ մեծանում են ու ծերանում, հարստանում են ու աղքատանում, ընդլայնում են իրենց իմաստը կամ նեղացնում, փոխում են իրենց բովանդակությունը»<sup>24</sup>:

Բացի այս դասակարգումից, կարելի է առանձնացնել «Կորոնա» բառույթի շուրջը համախմբված **թեմատիկ խմբեր**:

**ա. Վիրուս կրող մարդկանց խմբեր**՝ կորոնավիրուսակիր, կորոնավարակակիր, առաջնավարակակիր, գրոյական հիվանդ, կոնտակտավոր, վիրուսակիր, թագավարակիչ, թագավարակակիր, համավարակակիր, պսակաժահրակիր:

**բ. Համաճարակի հետ կապված՝ մարդկանց զբաղմունքի և վարքականի անվանումներ**՝ բուժառու, պարետ, պացիենտ, քովիդ ակտիվիստ:

**գ. Առարկաների անվանումներ**՝ դիմակ, ռեսպիրատոր, շնչադիմակ, կրիչ, հեռահար ջերմաչափիչ:

**դ. Համաճարակի հետ կապված հիվանդությունների անվանումներ**՝ կորոնա, համավարակ, թագավարակ, թագաժահր, ժահրախտ, վիրու-

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 18:

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 451:

<sup>23</sup> Տե՛ս **Антеро Натри**, Типы неологизмов в русском языке периода коронавирусной инфекции COVID-19, Университет Тампере, 2021, էջ 34:

<sup>24</sup> **Լ. Հախվերդյան**, Զրույցներ լեզվի մասին, Եր., 1986, էջ 35:

սիկ, դելտա շտամ, քովիդ, կորոնամարագմ, կարանտին, կորոնավիրուս, պսակաժահր:

**ե. Մարդկանց վարքականոնի դրսևորման եղանակներ՝** կորոնաֆորիա, կորոնապանիկա, կորոնաֆեյթ, կորոնակեղծիք:

Լեզվական միջոցների ուսումնասիրությունից բացի, կան միջոցներ, որոնք նպաստել են կորոնավիրուսային համաճարակից խուսափելուն:

**5. Ոչ խոսքային միջոցներ:** Բացի լեզվական միջոցներից, կորոնավիրուսի ժամանակ մեծ նշանակություն ստացան նշանանային համակարգերը:

**1. Գծանշումները** զանազան վայրերում՝ խանութներ, դեղատներ, հիվանդանոցներ են: Դրանք 1.5 մ ֆիզիկական հեռավորություն էին ապահովում. նախազգուշական միջոցներ էին մարդկանց համար՝ վարակից խուսափելու նպատակով:

**2. Կայուն ժապավենները** նստարաններին փակցված, որոնք ևս ապահովում էին սոցիալական կամ ֆիզիկական տարածություն:

**3. Հեռահար ջերմաչափում:** Աշխատավայրերում, կրթական բոլոր օջախներում սկսեցին գործել հեռահար ջերմաչափման սարքերը: Հեռահար նշանակում է հեռավար կետերից հարվածող:

**4. Բարևելու ձև:** Միջազգային պրակտիկայում սկսեց գործել արմունկներով ու բռունցքներով միմյանց հպվելով բարևելու ձևը: Մարդիկ հարկադրված էին այդպես մեկը մյուսին բարևել՝ վարակից զերծ մնալու նկատառումներից ելնելով:

Այս նշանային համակարգերը ևս հնարավորություն էին տալիս, որքան անհրաժեշտ է, նախազգուշական միջոցներ ձեռնարկելու:

**«Կորոնա»** բառային շուրջը խմբավորված բառերի ու բառակապակցությունների (շուրջ 122 բառ և բառակապակցություն) այս քննությունը վկայում է այն մասին, որ համաշխարհային իրադարձությունները ևս լեզվի վրա մեծ ազդեցություն են գործում, և լեզուն յուրովի է արձագանքում դրանց: Համաճարակի ընթացքում ստեղծված բառերը, բառակապակցությունները, ինչպես նաև ոչ խոսքային միջոցները տեղեկություն են հաղորդում հասարակական նշանակություն ունեցող երևույթի մասին, որն անհրաժեշտ է մարդկանց կողմնորոշելու, իրենց գործելակերպը կարգավորելու համար: Իսկ նշյալ բառերը, մեր կարծիքով, ժամանակի ընթացքում գործածությունից դուրս կզան՝ դառնալով կորոնավիրուսային ժամանակահատվածը բնութագրող պատմաբաներ, և կարձանագրվեն միայն բառարաններում:

**АНАИТ АДИЛХАНЯН – Коронавирусная лексика как «инструмент» коммуникации.** – Статья посвящена влиянию на словарный запас (лексику) армянского языка в результате беспрецедентной атаки на мир COVID – 19. В связи с новой обстановкой с лексемой «корона» были образованы новые слова и словосочетания, были заимствования из английского языка, имело место расширение

смысла действующих слов. Эту коронавирусную лексику классифицировали согласно употреблению и функциям: медицинские термины, признанные обществом слова и словосочетания, слова, выражающие стилистическую ценность, а также тематические группы: группа людей, носителей вируса, наименования занятости и правил поведения людей в связи с пандемией, названия предметов, названия болезней, связанных с эпидемией.

Этот анализ (около 122 слов и словосочетаний) свидетельствует о том, что мировые события оказывают также большое влияние на язык, и язык по своему реагирует на них. Во время пандемии образованные слова и словосочетания, а также невербальные методы передают информацию о явлении, имеющем общественное значение, что необходимо для ориентировки людей, урегулирования их жизнедеятельности. А слова со временем выйдут из употребления, став архаизмами, характеризующими период коронавирусной пандемии 21-ого века, и зафиксированы в словарях, дополнив словарный состав армянского языка.

**Ключевые слова:** лексема «корона», коронавирусная лексика, медицинские термины, признанные обществом слова и словосочетания, пандемия, самоизоляция, невербальные средства, вирус, мировые события, тематические группы

**ANAHIT ADILKHANYAN – *Coronavirus Vocabulary as a Communication “Tool”***. – The article is dedicated to the impact of COVID – 19, which has plagued the word without precedent, on the vocabulary of the Armenian language. Due to the created new situation, new words and phrases were created with the foreign word “korona”, borrowings from English were made, the meanings of the words in the vocabulary were expanded. We have classified this coronavirus vocabulary according to the function, medical terms, words and phrases that have become public, expressing stylistic nuances, also according to thematic groups, groups of people carrying the virus, the occupation of people related to the epidemic, the names of the code of conduct, the names of objects, the names of diseases related to the epidemic. This study (about 122 words and phrases) proves that world events also have a great influence on the language, and it reacts to them in its own way. The words created during the pandemic, idioms, as well as non-verbal means, convey information about a phenomenon of social importance, which is necessary to orientate people and regulate their actions. And the words will go out of use over time, becoming historical words characterizing the coronavirus period of the 21<sup>st</sup> century and will be recorded in dictionaries, replenishing the vocabulary of the Armenian language.

**Key words:** coronavirus vocabulary, communication “tool”, medical terms, new situation, popular memorized words, words expressing stylistic coloring, self-isolation, phraseological terms, touchy new words, non-verbal means